

աւանդութեան, Յովսէփի տան մօտ էր, ուր Ս. Ընտանիքը ապաստանեցաւ եգիպտոսէն վերադարձին և ուր խնամուեցաւ Յիսուս, ինչպէս յայտնի է, նոյն տեղւոյն վրայ շինուած եկեղեցիին անուենէն որ կը կոչուէր Տաճման եկեղեցի, այժմ աւերակ: Մանուկը որքան կը զարգանար՝ կը կատարէր աւելի ծանր գործեր, Յովսէփի հսկողութեան տակ, որուն աշակերտը եղաւ՝ նուիրական բացատրութեան համաձայն: Աւետարանը կ'ուսուցանէ թէ Յովսէփ հիւսն էր (Մատթ. ԺԳ. 55). ըստ մեկնիչներու, Աւետարանի այս բառէն կը հասկցուի երկաթի և տախտակի աշխատանքը, հետեւաբար լաւ համապատասխանելով սալագործութեան գաղափարին, ինչ որ կը հաստատէ արեւելեան աւանդութիւնը, որուն համաձայն Յովսէփ կը շինէր լուծ և խոփ (Աւետարան Յակոբու, Թ. և ԺԳ, Աւետարան Թովմասի ԺԳ.) Ս. Մարկոս միեւնոյն բառը Յիսուսի աշակերտութեան, որով աստուածային Գործաւորը պիտի շահէր իր և մօրը հացը:

Անյայտ Աւետարաններու, գոնէ Թովմասի Աւետարանին զիմելով՝ կարելի է քիչ մը լոյս սփռել Յիսուսի անծանօթ մնացած մանկական կեանքին. Թովմասի Աւետարանը միակն է որ կ'ըսէ ճշմարտանման բաներ, վերաբերութեամբ այն սքանչելիքներուն որ այս շրջանին ցոյց կը տրուին:

«Օր մը Յակոբոս (հաւանաբար փոքրը) փայտ հաւաքելու երթալուն՝ Յիսուս ալ կ'ընկերանայ անոր: Արդ երբ Յակոբոս գետին ինկած ճիւղերը կը հաւաքէր, օձ մը ձեռքը խայթեց, և թոյնը արագօրէն իր գործը կատարեց, երիտասարդը քիչ մնաց պիտի մեռնէր, երբ Յիսուս վէրքին վրայ փչեց: Անմիջապէս